

ՍՈՒՐԶՍԻԳՈՒԿ ՄԱՍՆԱՅ ԱՂԱՒԵՒՈՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ . — Թեպետ եւ ըստ խորհրդոյ բարեկամաց եւ ըստ խնդրոյ բազմաց ուզեցինք տարւոյս սկիզբէն երկուքի բաժնել այս մեր ամսաքերքը եւ տասնընիւց օրը մէյմը հրատարակել, բայց յետոյ բաժանորդաց դեռ սակաւաքի ըլլալը տեսնելով՝ խոհեմութիւն չհամարեցանք աւելցնել մեր աշխատութիւնն ու ծանրացնել ծախքերը. ուստի դարձեալ հարկադրեցանք ամսօրեայ պահել նաեւ այս տարի մեր գրուածքը, եւ առ ժամս քանի մը երես աւելցնելով գոհ ըլլալ:

— Առ Պ. Կ. Ի Կ. — ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ըսուած գիրքը բարգմանած չենք, ինչպէս որ վրիպակաւ լսեր էք, այլ անոր մէկ քաղուածը յօրինել ենք՝ մերազնեայ ընթերցողաց հասկըցողութեանը յարմարեցնելով. գոր եւ յետ սակաւուց հրատարակել կարենալու յոյս ունինք:

— Առ Պ. Խ. Ս. Ի Զ. — Հայերէն եւ Գաղղիարէն բառարանին յօրինուածը լմբնալու վրայ է, ու հեղինակին ջանիցն ու հմտութեանը նայելով՝ կրնամ այժմէն վստահացնել զձեզ որ քէ ձեր եւ քէ այլոց երկայնմտութիւնը, կամ քէ ինչպէս որ կըսէք՝ *անհամբերութեամբ սպասելը* արժանապէս պիտի վարձատրուի գործոյն կատարելութիւններովը:

— Առ Պ. Գ. Ի Կ. — Մեր հին Պատմագրած գաղղիարէն բարգմանութեամբ ու ծանօթութիւններով հանդերձ տպուելու աւետիսն որ կը հարցնէք՝ ստոյգ է, ու Պարոն Տիւլորին արդէն ՀԱՆԳԷՍ ԱՐԵՒԵԼԻՍ (Revue de l'Orient) ամսագրոյն մէջ այս առաջարկութիւնը հրատարակեց, մենք ալ ամսագրոյս յաջորդ քերթին մէջ տեղն ի տեղը պիտի խօսինք այն օգտակար ու փառաւոր ձեռնարկութեան վրայ:

— Առ Պ. Ա. Թ. Ի Կ. — Ներեցէք ինծի ըսել քէ ի գուր տազնապեր էք այս անգամ նախանձոտաց չարախօսութենէն . . . Կրօնական ամենահարկաւոր ուսումը Արեւելեան վարժարանին դաստիարակութեանը հիմն ըլլալով, հայկազն աշակերտները շարաքը երեք անգամ կրօնի դաս կառնուն: Այս դասախօսութիւնն երեք մաս բաժնուած է, այսինքն Մասունք հաւատոյ, Պատուիրանք Աստուծոյ եւ Եկեղեցւոյ, եւ Աղօթք, Խորհուրդք եւ Արարողութիւնք: Առաջին մասին մէջ կըսովրին տղայք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ եական մասունքը, հանդերձ Նիկիական հանգանակին (Հաւատամքին) մեկնութեամբ՝ իրենց հասկըցողութեանը եւ վիճակին համեմատ ոճով. երկրորդին մէջ կըսովրին աստուածային եւ Եկեղեցական պատուիրանքներն ու անոնց դէմ գործուած մեղաց զանազանութիւնները. իսկ երրորդին մէջ կը սովրին Եկեղեցւոյ սուրբ խորհուրդները, եւ մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ ժամակարգութեան եւ այլոց պատկառելի արարողութեանցը վրայ եղած հարկաւոր տեղեկութիւնները: Եւ այս դասախօսութիւնը այնպէս կարգադրուած է որ մէկ տարուան մէջ պիտի լմբնայ: — Երկրորդ տարին կըսովրեցուի համառօտ եկեղեցական պատմութիւն ընդհանուր եւ ազգային. երրորդ տարին համառօտ բացատրութիւն սուրբ գրոց դժուարիմաց խօսքերուն. իսկ չորրորդ եւ հիգերորդ տարին այս ամենայն գիտելեաց վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւններ կը տրբուին աշակերտաց: — Յայտնի է քէ վարժարանիս մէջ գտնուող գաղղիացի աշակերտաց համար ալ մասնաւոր քահանայ մը սահմանուած է գաղղիացի, որ շարաքը մէյմը կուգայ ու պէտք եղածը կըսովրեցնէ անոնց: